հոն թափանցել։ Երկու մարդերը որքան ալ ըստ ելեւոյթին անշշուկ քայլերով յառաջացեր են, կռահուած են։ Ախիճները աւելի կատաղի կը մնչեն, խայտարդէտ վագրը աւելի լարուած կը խոյանայ, եղջերուն աւելի չուարած կը փախչի, ձկները աւազանին մէջ կը շրջունեն, և թռչուններ ազոցիներէն վար կը դիմեն կամ ուրիշ ծառի վրայ կը ցատքեն։ Բայց ասոնք մեծ, կրթուտ ու արտայայտող Քրոչունները են, գրեթէ յունարէն պիտի խօսին ինչպէս Աղեքսանդրի հանդիպած Քրոչունները, Սուս — կալիթենի մէջ։

Ո՞ր իշխանի բանաստանն է այս, Սասունի վարդապետանին ո՞ր գրուագէն ազդուած է այս ամբողջը։ Ինչ մտածեր է այն մարդը կամ կինը այս ամբողջը հիւսած պահուն։ Իր մտածութեան յատակութիւնը մեզմէ կը խուսափէ, կը թողու գուշակուիլ մշուշը. բայց քաղցր անձուկը միշտ աւելի ասասիկ է։

Քէլէկեան գեղեցիկ բաներ հաւաքած է։

Հ. Ն. Ակոփեան

ՀԱՅՑ ՆԻ ԱՍՈՒՐԻ

ԵԿԵՂԵՑԵԱՅ ՅԱՐԱՌԵՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ» 1908ին մէջ, ուսումնասիրութիւն Երուանդ Վ. Տէր Մինասեանցի, որուն էական մասերը արդէն չորս տարիներ առաջ արգոյ հեղինակը հրատարակեր էր Գերմաներէն լեզուաւ։ Գործը յոգնեցուցիչ չընթեռնուելու համար՝ ընթերցողաց մեծամասնութեան՝ զանց առնուեր է մէջէն ասորական բնագիրներն և միայն քառ առ քառ հայ թարգմանութիւնն դրուեր է։ Հըմտացուցից կ՝առաջարկուի գերմաներէնին հրատարակութիւնն ունենալ։ —

Հեղինակն ինքնին կը խոստովանի, որ գիրքս՝ իւր տեսակին մէջ առաջինն է, ուստի՝ կրնայ ունենալ իւր վրիպակներն, հարկ չըլլար հետևաբար հետամտիլ այս նիւթին մէջ, զորս արդէն հմտագոյնք և նոյն իսկ արգոյ գրիչը ժամանակաւ պիտի ուղղեն և լուսաբանեն։

Երկասիրութիւնս իրրև հաստատուն հետեւանք կը հանէ, որ «մեր եկեղեցին ո՛չ միայն միաքնակ է, բառիս սովորական իմաստով, այլ մինչև Ը. դարը՝ կողմնակից է եղել յուլիանական կամ խստագոյն միաբնակութեան, որ յետագայում էլ Հայոց եկեղեցու վարդապետները իրապէս Եուլիանոսի նման են մտածում և վարդապետում... և ըստ երևոյթին մտեեցել են Ակեբեանների»։ Յառաջ քան զայս հրատարակութիւնն՝ կը գտնենք Եւրոպական բառագրոց մէջ ալ, որ Հայոց եկեղեցին կը ճանչցուի միաքնակ, ինչպէս և Հաչէթ ալ իւր Ամմանաքին մէջ գնոյն կ՝ըսէ և չէ շատ հեռի, որ Տ. Մաքս՝ հայագէտ՝ Սաքսոնիոյ թագաւորին եղբայրն՝ իւր Աբեսեքի ուղևորութենէն վերջ հրատարակութեան մը մէջ կը կոչէ հայ եկեղեցին դեռ ևս միաբնակ։ — Որչափ որ կը յիշուի այժմեան դարուս մէջ լրագիրք հերքեցին Հայոց եկեղեցւոյն՝ միաբնակ ըլլալը, իսկ թէ Զորրորդէն վերջ մինչև Ութերորդ՝ հայք էին միաբնակ՝ յուլիանիտք՝ կարելի չէ ընդունիլ իբրև ճշմարտութիւն զայս, քանի որ գիտենք թէ հայը միշտ սիրեր է իւր լուսաւորիչը և անոր անուամբ աւանդուած վարդապետութիւնքը, քանի որ գիտենք թէ հայը միշտ փարեր է իւր սուրբ թարգմանիչներուն հոգեշունչ գրութեանցը և յոյն սուրբ հարց գրութիւններուն։

Որչափ որ այս մասին մէջ Թոյլ չիտար մեզ նախնեաց սէրն՝ և ճշմարտութեան փափագն գաղափարակից գտնուիլ, բայց երկասիրութեանս բազմակողմանի օգուտներն կը թելադրէ մեր ընթերցողաց յանձնարարել, որ մտոհանան՝ ունենան իրենց քննադատական գրոց դասուն մէջ, որ ստուգիւ իրենց ուսումնասիրութեանց մէջ շատ օգտակար կրնայ ըլլալ։ —

Սիմոն Վ. Եբեսի նկատմամբ խօսքերը՝ «եթէ մի կողմ թողնենք նրա կաթոլիկական ևևդ և ներկայ գիտութեան անհամապատասխան հայեացքը պատմական զար-

digitised by A.R.A.R.@

գացման վրայ» (էջ 2) և այլն՝ լե արդա-
դադատ, քանի որ արգոյ հեղինակիս և
որոց ինքը կը հետևի անոնց գիտութիւնը՝
թուաբանական ստոյգ ճշմարտութիւններ
չեն և ենթադրութեամբը և հաւանակա-
նութեամբը լի են, և ըստ քննագիտութեան
հայեցողութեանց միշտ փոփոխութեանց
ենթակայ են, ուր թողունը որ մեր արգոյ հե-
ղինակին խոյանքն վերաթեող վարդապետ
և սրբազան՝ կ. Պոլսի Պատրիարքական և
կրօնական ժողովոց և լրագրաց եւս ոչ
դրուատանացն արժանացան։ Ալելորդ կը
համարինք պատասխանել ինչ որ Հ. Սար-
գիսեան Վ. ի վրայ ուզելով քննադատել
յարձակումի մը կ'ըլլայ վէնետկի "Մխի-
թարեան Հարց։ Զարմանք պէտք չէր ազ-
դել իրեն եթէ Հումերոսներ իսկ կը քնա-
նան։

Ըզգարի նամակագրութիւնն Քրիս-
տոսի հետ և նորա բժշկութիւը Թադէոս
առաքեալէն, որչափ որ արդի գիտութիւ-
նը անվաւեր իրողութիւն մը կը հաստա-
տէ պատմութեամբ՝ յեցեալ լատին վկա-
գրերու վրայ, բայց գարերու վկայութիւնը
ազգերու աւանդութիւնը պէտք չէ՝ անոտր-
ժէք ղրոյց՝ համարիլ։

Ցայժ շահեկան գիտ մը պիտի ըլլար
եթէ հաւաստուէր հետևեալն « ամենայն
հաւանականութեամբ Հայոց գարձը 280ա-
կան թուականներին պիտի եղած լինի»։
(էջ 20)։ եթէ քաղաքականութեամբ կոս-
առանդնուած և Տրդատ քրիստոնեայ կը
դառնան, ինչպէս պէտք է մեկնենք թու-
զանդ պատմչին մեր նախարարաց և ժո-
ղովրդեան հակամիսութիւնն դէպի հեթա-
նոսութիւն և ինչու իշխանք կը թուսնա-
ւորեն զՏրդատ, ինչու զի։ Իատակէս կը
մեղադնեն և զի։ Վրէնէտ կը պաշարեն
աշխարհին առաջին եկեղեցւոյն մէջ յԱշ-
տիշատ ...։ Ինչ փաստերով կ'ապացու-
ցուի, որ Ջենոր Գլակի «անուամբ Ճա-
ցած գրուածքը կեղծիք է և գիտական աշ-
խատանքի համար միանգամայն անգոր-
ծադրելի» (էջ 29)։

Ըրդեօք Ագաթանգեղեայ.. մէջ ինչ ինչ
վկայութիւնը Ս. Գրքէն չեն ապացուց-
ներ, որ ըստ Հ. Ս. Պարոնեանի և Տէր
Մովսիսեանի «հայերէն Աստուածաշունչը
սկզբում թարգմանուել է Դ. Դարու սկզբ-
րին» (էջ 54)։

Եկեղեցապատմութ Ցուլիանոս Հաղի-
կառնացւոյն մոլորութիւնը կը համարին
յայտ թէ «Քրիստոսի մարմինը անապա-
կան ասացօր միայն կրեց չարչարանք և
մահը» (P. Maestro Salzano. Corso
di Storia Eccl. V. I. 284 և այլն),
արդ ստոյգ է, որ ուղղափառք կը դաւանին
Քրիստոսի մարմինը անապական, զի միա-
ցեալ էր Բանին Աստուծոյ անձին հետ,
բայց ոչ երբեք կը խոստովանին թէ առ-
աջօք կրեց չարչարանք և մահ։ Հետե-
ւաբար եթէ Հաղիկառնացին հաստատած
ևս ըլլայ թէ Քրիստոսի մարմինը է ա-
նապական, բայց որովհետև առաջօք ևս՝
կ'ըսեն՝ թէ կը դնէ անոր չարչարանքը և
մահը, ուստի շատ իրաւամբ մեր նախ-
նիք չորակեցին հայ եկեղեցին ո՛ և է ժա-
մանակ մը Հաղիկառնեան և կամ անոր
հետևող և ոչ անոր վարդապետութիւնն
ունեցող (էջ 100)։ մանաւանդ որ յիշուած
աստրական դաւանութիւնը (97) «չարչա-
րեցաւ, խաչեցաւ և մեռաւ վասն մեր,
որպէս և կամեցաւ, ստուգապես և ոչ կար-
ծեօք» կը հաւաստեն, որ առ նեղեսս ի,
դիմող ատրիք թէ և Աևերիանոսը կը դա-
ւանպարտեն «զի մարմինն, որ ի մէնչն ա-
ռաւ, անապականութիւն էր և փառաւոր
ի համաճ միութիւն», բայց մեռաւ ստու-
գապէս և ոչ կարծեօք ըսելով կը դատա-
պարտեն զՀաղիկառնացին (97), ինչպէս
և Ջաքարիա կաթուղիկոս ալ կը գրէ առ
փոտ թէ մենք Ս. Գրիգորը գիտենք և ոչ
զՀաղիկառնացին կամ զայլ ոք, և Շնորհա-
լին, թէ կը նզովենք զՀաղիկառնացին, ինչ-
պէս և արգոյ հեղինակը կը յիշէ այլուր։

Ջուզելով յուզել և այլ խնդիրներ, յո-
րոց արդէն ինչ ինչ Հանդէս Ամսօրեայ
ժամանակին քննադատեր է, կը շնորհա-
ւորենք արգոյ հեղինակը իր չափաւո-
րութեանը, իր անկողմնակալ Ջանիցն և
մանաւանդ իրականութեան հետապնդման
համար։

Կ. Վ.

digitised by A.R.A.R.@